

ՎԵՆԵՏԻԿԻ ՆԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԾԱՅԱՄԱՏԵԱՆԸ

Տարբեր քաղաքների ժամանակի ընթացքում հաաբել ենք մեր վանքերի և եկեղեցիների ընծայամարտանների (Քեռթուկ) շար արժեքատու բնագրեր և մարտիք ենք բոլորը հրապարակել միապուղ՝ որպես մի մեծ և ամբողջական ժողովածու¹: Այս բնագրերն ունեն բազմապատկար արժեք-արժանիքներ, որոնց շարքում առաջինը, անշուշտ, մեր երկրի միջնադարեան ապրանքաշրջանառության և ընդհանրապես քրիստոնեական պարմության կարևոր սկզբնաղբիւրներ լինելն է², երկրորդը, որ մեզ համար կարևորագոյնն է՝ կրկին միջնադարեան հայկական վանական և եկեղեցական գրադարանների պարմունակութիւնը ներկայացնող առաջնակարգ աղբիւրներ լինելն է:

Մեր բնագրերի մեջ է նաև Վենետիկի հայոց Երեման Ս. Խաչ եկեղեցու մարտանը (աւելի ճիշդ՝ քրիստոնե), որ այսու հրապարակում ենք որպես նմուշ. յայս ունենալով, որ այս օրինակը առիթ կդառնայ սպանալու մասնագիտական օգտակար առաջարկներ, որոնց կիրառմամբ հեղադայում ամբողջ ժողովածուի նիւթը կներկայացնենք առաւել լա մշակումով:

Երջանիկ պարահականութեամբ և եզակի բացառութեամբ ունենք այս աղբիւրի երկու քաղբերակ՝ Մաքրագիւր և Մուագիւր.

ա. ՄԱՔՐԱԳՒԻՐԸ. Վենետիկի քաղաքային արխիւում է՝ Archivio di Stato di Venezia, Procuratori di San Marco, misti, b.180°, fasc. 3, pag. 1, որ ըստ մեր ունեցած պարմէնի³ հերտեալն է. 12 թերթ. չգրում՝ 9ա, 11բ-12ա, թուղթ. մեծութիւն՝ 44 թղթի վրայ պարմէն-նաճ 2 էջ կամ մի բացումաճ. գրութիւն՝ միասին (14,2x10,5. գրադաշտը ձախից և աջից սահմանագծում), գիր՝ բոլորգիւր, 23 քող⁴:

բ. Նախորդի ՍԵԲԱԳՒԻՐԸ ԸՃմմառի Ս. Տիրամօր վանքի ձեռ. ՏՊ 443 (Անպոնեան ՏՊ ԻԷ.). Խորիքդարեպր, ՌՃԲ. - 1653 թ., Վենետիկ, գրիչ՝ Աստուածապուր դայիւր, սպացող՝

1 Անիւսժեշտ վերաբնութեամբ ժողովածուի մեջ լինելու է նաև արդէն քաղագրում հերտեալը՝ Յ. Փափագեան, Ալոռու Ս. Յակոբայ վանքի քեռթուկը.- Բաներ Մարտնադարնի. հր. 12, Երեան, 1977, էջ 191-215:

2 Մեր՝ «ընծայամարտան» կոչած բնագրերը համաոս և ճշգրիտ բնորոշել է մեր հանգուցեալ ոսուցիչ Պ. Մուրադեանը. «եկեղեցու կամ վանական հաարապութեան պարմութիւնը, ունեցումաճը, նուիրապոտութիւնները, նուիրապոտները, առումախը և այլ պարագաներ բովանդակող ժողովածուներ».: *Յիշատակարան Սանահնոյ վանից, աշխարասիրութեամբ* Պ. Մ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2006, էջ 9. «Սանահնի Քեռթուկ»-ը մեր այստեալ բնագրերի շարքում երեւի ամենամաւալունն է, և նրա հրապարակութիւնն արում է բնագրական հնարաւոր լաագոյն մշակում-քննութեամբ:

3 Տեղրի պարմէնը 2011 թ. Մեպրեմբերի 17ին շնորհակալութեամբ սրացել ենք Վարդան Կարապետեանից:

4 Մեր բնագրից բացի, ունի ԺԸ. դ. նորագրով արում հերտեալ յաւելագրութիւնները. ա. 9բ-10ա [Առ սուրբ կոյսն] - Առաջնաճաշակ պըրդոյն, մահուան առաջին մարդոյն / եղեր անիծից լուծիչ մայր Մանուէլի սուրբ կոյս, / Բանն որ ի Տօրէ էր լոյս, իջեալ ի յերկից մեզ լոյս... Ղամբար համաախիւը լուսոյ, վառեալ ի Տօգոյն Սրբոյ, հերթից մահաբեր մըթոյ, մայր /// (չարունակում. ծայրակալ՝ ԱՂ): բ. 10բ [Առ Քիստոս Աստուած] - Գթած ես դու և ողորմած, մարդասէր, մարդասէր, / Քիստոս, ըրահ մի գօք փարիշահըն Տէր Յիսուս, Տէր Յիսուս... Ունանցեալ իոգով Գալուստ մեղաց պեր, մեղայ քեզ Քիստոս. առնն (ծայրակալ՝ «ԳԱՆՈՒՍ»): գ. 11ա [Առ Յովհաննէս Մկրտիչ] Ի մեջ մեղաց ալլէկոծիմ երերեալ, երերեալ, / ղգբեզ ունիմ ինձ օկնական, յորժամ յոսուս... Մեծն Ոհաննէս ընը քեզ գոլով միակամ, միակամ, / վասն իմ բարեխօսե, յարք /// (չարունակում): Իսկ 12ա՝ մարիքով իրաւերեն դժուարընկալի 9 քող:

Մալագար Ջուդայեցի. 1 չհ., 27 թերթ. չգրում՝ չհ. 1աբ, 24բ, 27բ, թուղթ, երկսիւն (գրադաշպը՝ $15,5 \times 5 + 5 = 10$), բոլորգիր 24 փող: 1ա-18ա՝ Պապարագամարոյցն է, այսինքն՝ բուն ձեռագիրը, 18բ-27ա՝ յաւելումն է մեր բնագիրը, որ անխորագիր է և որ ձեռագրացուցակի մէջ բնորոշումն է՝ «Յիշարակարան և նուիրարությունը Ս. Խաչ եկեղեցույ ի Վենետիկ (այլ և այլ գրիչներէ)»: Ձեռագրի գրչութեան «Տեղի՛ անյայր» են համարել, մինչդեռ ակնյայր է, որ գրուել է Վենետիկում: Նկարագրութեան մէջ կան մեր բնագրից արում քաղուածքներ, իսկ վերջում այս ծանուցումն է. «Բարեբար կամ նուիրարու վաճառականներու մեծագոյն մասը կը կազմեն Ջուդայեցիները»⁵, որ լիովին իրաւացի է:

Նկարքերի փաստ է որ Ս. Խաչ եկեղեցու սրացած նուէրներ են նաեւ Ընծայամարտանի թէ՛ սեւագիր⁶ և թէ՛ մաքրագիր⁷ օրինակները:

Սեւագրի կառուցուածքի նկարաւելի հանգամանքներ. բուն Խորհրդարարի մասի թերթերի չափը 22,2x16,3 սմ է (Յուցակում գրումը՝ 22x16,5). սա ունի երկու պրակ. Ա՝ սկզբի չհամարակալած 1 թերթը + թ. 1-9 = 10 թերթ, Բ. պրակը՝ թ. 10, 13-20, 23 = 10 թերթ (թ. 11-12՝ բուն մասի թերթերի չափսի, բայց ներմուծում են և կոպիւր կարում հիմքին):

Գրչութեան յիշարակարանը Պապարագամարոյցի վերջում է և վերաբերում է միայն այդ մասին. «Ո՛վ սուրբ պապարագօղ, յիշեա՛ր գԱստուածաբուր դայիրս, թվին ՌՃԱ. (1652), Յուլիսի Ի. (20), օրն Գ.շաբթի. աւարսն այս է: Գրեցաւ սուրբ Խորհրդարարներս և յիշարակ սուրբ Աստուածածին ի թվին հայոց ՌՃԲ. (1653) ամին և հայրապետութեան հայոց քեանն Փիլիպպոս կաթողիկոսին: Աղաչեմք զձեզ, ո՛վ սրբամիտ քահանայքդ Աստուծոյ, և յորժամ մարտցանէք պապարագ Բրիսպոս զանն Աստուծոյ և Որդի Նաւր և ընթերնութ կարարել խորհուրդն՝ յայնժամ խնդրեցէ՛ք մեղաց թողութիւն վաճառականերոյս, ևս և առաւել անարժան մեղաւոր Ջուդեցի Մալագարս, որ հեպտեւեցա յիշարակ սուրբ գրոյս. և փառք յաիպեանս. ամէն» (18ա)⁸:

Ընծայամարտանը գրառելու համար գործածուել են սկզբնական՝ բուն մասի դեռուս չգրում 18բ-20բ, 23աբ էջերը, որոնց աւելացուել են. ա) թ. 21-22՝ ներմուծում երկծալում 1 թուղթ է, թերթի չափը՝ 21,1x15,6 սմ, բ) թ. 24-27՝ նոյնպէս ներմուծում, երկծալում 2 թուղթ. թերթի չափը՝ 21x15,1 սմ⁹: Մաքրագիր րեպրի գրառումների ընթացքի

5 Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմաթի վանքի մարտնադարանին, հր. Բ. «Անդրեան հաւաքածո», Կազմեցին Ն. Ն. Վ. Ալիսեան և Ն. Ն. Վ. Ռսկեան, Վիեննա, 1971, էջ 39-40: Այս օրինակի գոյութիւնը նկարեցինք 2012 թ. սեպտեմբերի սկզբին Զմմառում աշխարելու ընթացքում. երախարագիւրութեամբ յայտնում ենք, որ թէ՛ այս բնագրի և թէ՛ մեր հիմնական աշխարանքի ընթացքում ունեցել ենք վանքի մեծատը Ն. Գաբրիէլ ծ. վ. Մուրարեանի, թանգարանի և ձեռագրարան պարասխանաբու Ն. Մովսէս Տօնանեանի, մեր վաղեմի բարեկամ Ն. Նոյա Դերձակեանի և վարում ներկայ բոլոր միաբանների աջակցութիւնը:

6 Սեւագրի հիմք Խորհրդարարի պարտիքարու-սրացող Մալագարը կամ Մալուգարը, երեւի գրելուց անմիջապէս յետոյ՝ 1653 թ. այն նուիրել է Ս. Խաչին. քնն սրորեւ ԻԸ.27. յիշարակութիւնը. «Աստուած ողորմի Ջուդայեցի Մալուգարին, որ ետուր մին Խորհուրդարար պապարագի», որ հէնց Անդրեան-Զմմաթի ԻԷ/443ն է: Սա նշանակում է առնուազն, որ 18բ-20բ էջերի յիշարակութիւնները նախ գրուել են այլ տեղ՝ առանձին թղթերի կամ րեպրի մէջ, որից արագրել են Խորհրդարարի մէջ՝ այն նուէր սրանալուց յետոյ:

7 Մաքրագիր րեպրակի գինը վճարել է «Երիջանէնց Յովանիսի որդի Եավրի»-ն (քնն սրորեւ՝ յիշ. 103):

8 Տպում է նաեւ Նայերեն ձեռագրերի ԺԷ. դարի յիշարակարաններ (1621-1640 թթ.), հր. Գ., Կազմեց Վազգէն Յակոբեան, Երեւան, 1984, էջ 569, Ն^թ 873: Այստեղ յիշարակարանի «սուրբ Աստուածածին» բառերը դարձում են «Ս. Աստուածածին», որ արդէն եկեղեցու անուն է, իսկ սա անհասկանալի է, որովհետեւ զիւրենք ձեռագիրը քրտել է «Սուրբ Խաչ» անունով եկեղեցուն: Ըստ այսմ՝ անյայրակ են «և յիշարակ սուրբ Աստուածածին» և սրացող Մալագարի «որ հեպտեւա յիշարակ սուրբ գրոյս» խօսքերը:

9 Կազմը Վարիկանի հայերեն րպագիրների նման՝ սրուարաթոթ միջուկով մագաղաթ է, կեղտոտում,

համեմար՝ սևագիրը պետք է կարդալ 18բ-21ա, 23ա-27ա (24բ՝ չգրուած), 21ա-22բ կարգով:

Կարևոր է, որ այս փոքրիկ փաստաթուղթը թէ՛ վերահաստատում է թէ՛ աւելացնում է վեներահայոց, Նայոց քանը և Սուրբ Խաչ եկեղեցուն վերաբերող մեր գիտելիքները, որոնք ամփոփուած են հիմնականում մեծավաստակ Դ. Վ. Ալիշանի շար նշանատը «Նայ-Վենետ»ում¹⁰: Ըստ այստեղ ի մի բերուած փաստերի՝ 1253 թուականին Սեբաստիան Ծիանի դուքսի (դոժի) ևղբօրորդի Մարկոս Ծիանին Սուրբ Յովիանոսի (San Zulfian) թաղում գտնուող իր մի տունը որպէս հիւրանոց (ospizio) կրակով նուիրել է վեներահայոց, այդուհետև վեցուկէս դար այն կոչուել է Նայոց տուն (Casa degli Armeni), քան փողոցն էլ՝ Celle degli Armeni, իսկ մօտի կամուրջը՝ Նայոց կամուրջ (Ponts Armeniorum seu Feralium)¹¹: Տարբեր ժամանակներում Ծերակոյրիին ուղղուած դիմումների մէջ վեներահայերը Մարկոս Ծիանիի կրակի թուական են նշել 1235 թ. մայիսի 25ը¹²: Ziani-ի առկայ կրակի թուականն է՝ 1253 յունիսի 5, այնպէս գրուած է այսպէս. «Տունն՝ ուր կենան Նայք (ըսել է թէ արդէն բնակած էին այն տեղ), կնոգենք որ մշտնջենաբար իրենց բնակարանի ըլլայ. և ինչ որ հարկատը համարուի տեղւոյն նորոգութեան, ի մեր սրացուածոց ըլլայ այդ ծախքն... Մեր այս կամքին յանձնակարար կու սահմանենք կենդանի մնացող ժառանգաց հետ, գտնարս գործակալս եկեղեցու Սրբոյն Մարկոսի»¹³: Ապա՝ «հարկ էր որ ի Ս. Յովիան թաղի գտնուած Նայոց քանը մէջ՝ ըլլար գտնէ ձեռացեալ մատուց մի, ինչպէս շարեր կարծեն, և կամ ուրիշ տեղ վանապուն մի կար: Եթէ նոյն թաղին մէջ կար այդպիսի մատուց, ինչպէս ինձ ալ հաւանական թուի, այլ հաւանականագոյն ես՝ թէ փոքր ու անշուք շինութիւն մէր, որ երկիցս և երիցս ընդարձակուելով (ի 1494, 1510-20, 1689), տակաւին և այժմ փոքր եկեղեցեակ մէ, թէպէտ և չքնաղ գոհար մի. ուստի, ինչպէս յայլ քաղաքս Իսթաթիյ կու գտնենք, պէտք է երդմնեցուցանուելով ամեն դիւան և յիշարակարան՝ փնտրել և ի Վենետիկ մեծագոյն եկեղեցի մի և Նայ միաբանք»¹⁴: «Ս. Յովիանոսի թաղին մէջ եղող Նայոց եկեղեցւոյն վրայ, որ գլխ յառաջ քան գկէս ԺԵ. դարու, յամի 1434, կու յիշուի պաշտեալ և պատարագօք, և միշտ Ս. Խաչ կու կոչուի և պաշտի մինչև ցայժմ»¹⁵:

Ըստ մի այլ տեսակէտի՝ Ս. Խաչ եկեղեցին կառուցուել է 1510-5 թթ., «բայց հանդէսը չէին կարարուեր, հաստատուած քահանայ կամ մարքարապետ մը չի գտնուելով»¹⁶: ԺԶ. դ. կէտերին մեծ «յաճախութիւն կար Նայոց ի Վենետիկ... Այս բանս յայտնապէս ծանուցին Նայք իրենց մէկ գրուածով, յամին 1579, որոյ ռաբաթարաբար Լայեթէն Բնագիրն չէայ, այլ իրաւ Եթէն Բնագրանն-Դի-ն. և այնչափ աւելի փափագելի և պատրաստան է, որ կ'իմացնէ:

Ծալքեր տրուած:

10 Տե՛ս Դ. Մ. Ալիշան, Նայ-Վենետ կամ յարեցութիւնք Նայոց և Վենետաց ի ԺԳ-Դ. և ի ԺԵ-Զ. դարս, Վենետիկ - Ս. Ղազար, 1896 (այսուհետև՝ Նայ-Վենետ):

11 Նայ-Վենետ, էջ 143, հմմտ. անդ, էջ 23:

12 Անդ, էջ 145:

13 Անդ, էջ 146:

14 Անդ, էջ 150-151:

15 Անդ, էջ 152:

16 Վարք Մխիթարայ աբբայի Սեբաստացոյ, Գրեց Ն. Յովիաննէ վ. Թորոսեան՝ յովսէփ Մխիթարայ, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1932, էջ 269-70 (այսուհետև՝ Վարք Մխիթարայ):

Նայոց միաբանությունն ժողովիլն և իրենց քան համար կարգ կանոն սահմանելն. յորում և եկեղեցական կամ կրօնական վիճակին այլ կու յիշեն, և միով բանիլ Սահմանադրությունն՝ և կանոնանեն իրենց որոշածը և գրածը, զոր ահա թարգմանեմք յիտալական թարգմանությունն»¹⁷: Եւ ահա՛ Ս. Խաչի մեր բնագրի Մաքրագիր փարբերակի սկզբում ունենք Ալիշանին՝ Սահմանադրությունն անուանած և իտալերէնից վերահայերէնացրած այս փաստաթղթի հայերէն բնագրի պարճէնը. թարգմանութեան «Այս է ծանուցումն Սահմանադրութեան ազգիս Նայոց» խորագիրը հայերէնում ունի «Յոյցք հնագոյն դաշանց» փեսքը, այսու հանդերձ՝ բնագիրը և Ալիշանի թարգմանութիւնը նոյնական բովանդակութիւն ունեն:

Ապա՝ «ԺԷ. դարուն սկիզբները (1606ին), Ամդեցի Յակովբ Մարգարեան քահանան, որ զանազան անգամ անցեր էր Վենետիկէն նուիրակութեան պաշտօնով, և ծանօթ էր փեղոյն հայ գաղթականութեան, Ս. Խաչի մաքրան հաստատուն հոգաբարձու և առաջնորդ ընտրուեցաւ, որ կռիւց, զարդարեց անշքացած մատուռը, և հինգ տարի եռանդեամբ և մեծ գործօնութեամբ վարելով իւր պաշտօնը, վախճանեցաւ 1611ին»¹⁸:

1476 թ. մինչև ԺԷ. դ. կէսերին վերաբերող դիւանական թղթերի մէջ Ալիշանը գրել է Նայոց քան 25 «քննախնդիր» անուններ, որոնց վերջինն է՝ «Պետրոս Ոսկան 1650-58»¹⁹: Բայց նա «հրաժարեցաւ ի քննախնդրէն (7 սեպտ. 1652)», ապա ընտրուեց «Անդրէաս Scuali վենետ. Սա յաջորդ տարին (1653) այլեւայլ անգամ հրաման առաւ Նայոց քան նորոգութեանց համար ծախսել 90 դուկատ, նոյնպէս և եկեղեցոյն սպասուց համար դարաններ շինել. և որչափ սպակի այլ պէտք ըլլար՝ պիտի տրուէր Ս. Ծիանեայ կրակին հատոյթն, որ է 465 դուկատ: Զսան տարիէ առիկ կատարած է սա Նայոց քան հոգը, և մահացած է յամի 1673 (ի յունիսի)»: Ապա 1674 փետր. 11ին ընտրուել է «Ֆիորավանդէ Բորդա (Fioravante Porta) անուամբ մէկն... Ասոր արեւն այլ Նայոց քան և եկեղեցոյն շինութեանց համար 100 դուկատ ծախսուց պէտք եղեր է»²⁰. և այլն:

Նայոց քանը և եկեղեցուն վերաբերող ժամանակագրօրէն յաջորդ կարևոր փեղեկութիւնը տալիս է արդէն մեր Ընծայամարեանը. նոյն ԺԷ. դ. կէսերին եկեղեցուն փրագել էին խաբերաներ, որոնք «երեւելօք ձեռացեալ էին կարգաւոր, բայց ի ներքոյ էին գայլք յափշտակօղք... անուղղա գնացիւք շրջէին և խայտառակ վարուք ուրէին և ըմպէին, զոր ոչ էր կարգ քրիստոնէից, զսեղան սուրբ եկեղեցոյս կողոպտէին, զգետն և զանօթն վաճառէին»: Փիլիպոս կաթողիկոսը Էջմիածնից ելել, Երուսաղէմ ուխտ էր գնացել և վերադարձի ճանապարհին հասել Կ. Պոլիս, որտեղից «խակոյն և վաղվաղակի չարաչար բանադրեաց զհերձուածքն այն», սրանք «նոս քան զնոս չարացան, և կարի որոմն և չարիք սերմանեցին ընդ ազգիս մերոյ, մինչև զեկեղեցիս մեր եւս ետուն փակել»: Ապա կաթողիկոսը «ի խնդրոյ մերոյ ազգաց վաճառականաց» 1652 թ. Վենետիկ «առաքեաց գրել Սահակն իւրով բարձր հրամանաւ և թղթով՝ վասն քահանայեագործութիւն առնելոյ»: Սահակ քահանան վաճառականների օգնութեամբ խնդիրը կարգաւորեց, եկեղեցին

17 Նայ-Վենետ, էջ 383. ընդգծումները մերն են՝ Գ. Տ-Վ.:

18 Վարք Մխիթարայ, էջ 270:

19 Նայ-Վենետ, էջ 199-200:

20 Նայ-Վենետ, էջ 493: Նայոց քան մասին փնտրելու Նայ-Վենետ, էջ 23, 143-8, 192, 157, 200, 384-6, 390, 481-94. իսկ Ս. Խաչ եկեղեցու մասին փնտրելու, էջ 148-55, 180, 199, 385-7, 390, 512:

բացուեց, սկսեցին հաշտառել և գրանցել «առաջնոցն յիշարակ» անօթներն ու զգեստները²¹:

Նոյն Սահակ քահանայից ունենք մի կարեւոր յիշարակ. «Արդ, ես՝ նուաստս Սահակ երէցս, հրամանաւ երջանիկ հայրապետին մերոյ Գրիգորի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց կացի ի Վենետիկ երեք ամ և վեց ամիս՝ առ ի քահանայազործութիւն հայոց վաճառականաց և սպասաւորութեան Երևման Խաչ եկեղեցոյս, որ և վասն եկեղեցոյս բազում նեղութիւն և վիշտս կրեցաք ի ձեռն սուր և խաբեփա հերծառածողի միոյ, վերջն ամօթալից և փախարական կորեաւ, վասն որոյ աղաչեմ յիշել զԹօխաթեցի Սահակ երէցս, որ փոքր ինչ պարծառ եղէ ի ի գնեւն սուրբ Անտարանիս»²²: Այս յիշարակարանը գրուած է Մխիթարեանց Վենետիկի մարեմաղարանի հ. 1392/173 արձաթակագն, հարուստ և բարձրարուեստ նկարագարող մունցող Անտարանի մէջ, որ ըստ նկարագրողի՝ կարող է սրելով լինել Նոր Զուղայում և որը երևի 1654 թ. (եղծումներ կան) Զուղայեցի Զամալեցի Պօղոսը գնել և նուիրել է «Երևման Սուրբ Խաչ եկեղեցոյն, ի գեղեցկաշէն քաղաքն Վենետիկ»²³. յիշարակարանն անթուական է. սակայն գիտենք՝ Սահակ քահանան Վենետիկ է գնացել 1652 թ., իսկ գրելու պահին այնպէս էր արդէն 3,5 տարի, ուրեմն գրել է 1655/6 թ.:

Վենետիկի ամենաբազմաթիւ «1665 տարւոյն միաբան խորհրդով որոշեցին մեծցնել մատուռը, որ շատ փոքր կու գար այնչափ բազմութեան: Բայց փոխանակ պարգապէս ընդարձակելու, հիմնովին նոր եկեղեցի մը կանգնելու ձեռք զարկին չափաւոր մեծութեամբ, և շինութիւնն աւարտեցաւ 1688 տարւոյ դեկտեմբերին: Եկեղեցին գմբէթաւոր է, իրեն փոքրկութեան մէջ՝ գեղեցիկ ճարտարապետութիւն. երեք խորան ունի և կողմնակի փոքրիկ աւանդատուն մը. աւագ խորանը նուիրուած է Երևման Ս. Խաչին, աջակողմեանը՝ Ս. Աստուածածնի Վերափոխման, ձախակողմեանը՝ Ս. Լուսաւորչի: Պարկերները՝ նոյն ժամանակ Ալբերտ Կալվերտի վենետիկցի նկարչին գործերն են: Դեռ եկեղեցի չմտած, առջեւը գաւիթ մը կայ, ուր կը գտնուին մի քանի նշանաւոր հայ վաճառականներու տապանաքարերը²⁴, որոնք 1812ին եկեղեցոյ նորոգութեան առթիւ, դուրս փոխադրուեցան, ներսը թողլով ոսկորները՝ ուր թաղուած էին»²⁵:

Դեռևս Սերասպացի հիմնադրի կեանքի օրօք եկեղեցին յանձնուել է Մխիթարի միաբանութեան հոգացողութեանը²⁶, այսօր էլ Մխիթարեան մի միաբան շարունակաբար վարում է Ս. Խաչի «ժամապետ»ի պաշտօնը:

Հայոց տանը և Սուրբ Խաչին վերաբերող բաւական շատ փաստաթղթեր կան թէ՛

21 Մրանց թուարկումը և հետագայում սրացուած նուէրների արձանագրումն էլ մեր վաւերագրի նպատակը և բովանդակութիւնն է, որի մասին մի փոքր յետոյ:

22 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մարեմաղարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հր. Բ., Յօրինեց Խ. Բ. Վ. Սարգիսեան, a Venice, 1924, էջ 726-7 (այսուհետք՝ Վենետիկի ցուցակ, Բ.):

23 Անդ, էջ 726: Այս Անտարանի նուիրատւութիւնը մեր ընծայամատեանի հ. ԻԱ.21 գրանցումն է (տե՛ս), այսպէս կան նոյն Զամալեցի Պօղոսի այլ նուէրներ եւս. «մին սկոյ ծածկոց, մին Անտարանի աղլոյխ, Ա. ջերմակ գառ շորջառ, Ա. թեւ, Ա. վարչամակ» (տե՛ս Մարգարի հ. 26), այլեւ՝ «Բ. ճերմակ շապիթ, մէկ միջաց գունար՝ գլովն արծաթէ» (Սեւագիր, հ. ԻԹ., հմմտ. հ. ԻԶ.):

24 Տապանագրերը տպագրուած են՝ Վարք Մխիթարայ, էջ 385-6. մեր Ընծայամատեանում առկայ երեք նուիրատւների տապանագրերն այսպէս թերեւ եւս որպէս իրենց վերաբերող ծանօթութիւններ:

25 Վարք Մխիթարայ, էջ 270-1: Տարօրինակ է, որ Ընծայամատեանի մէջ 1688 թ. Ս. Խաչն ի նորոյ կառուցելու մասին որեւէ տեղեկութիւն չկայ:

26 Տե՛ս Վարք Մխիթարայ, էջ 277-8:

Վենետիկի քաղաքային արխիվում եւ թէ Մխիթարեանց Վենետիկի վանքի դիւանում. մի օր անպայման պէտք է պարբերաբար եւ հրապարակել այդ վաւարագրերի ժողովածու(ներ), ապա՝ նրանց հիման վրայ հիսուել գրեթէ միասնական գործունէութիւն ունեցած այս հաստատութիւնների պարմութիւնը: Սակայն դա մեր ներկայ խնդրի շրջանակից դուրս է, ուստի դառնանք մեր բնագրին:

* * *

Սա սովորական դասական ոճի շարադրանք չէ, առաւել եւս՝ մեր ունեցածը նոյն գործի երկու՝ Սեւագիր եւ Մաքրագիր փարբերակներն են, որոնց հիման վրայ փարբերութեամբ համեմատական բնագիր կազմելն անխմաստ է (կարող էինք ստանալ ամէն ինչ խառնած մի խճողում, որից պարզ պարկերացում ստանալն անհնար կլինէր). ուստի Սեւագրից Մաքրագիր ստանալու ճանապարհին առաջացած փարբերութիւնները յստակ ցուցադրելու նպատակով որոշեցինք մեր ունեցած փարբերակները ներկայացնել հանդիպաղիք, երկսիւն՝ մի սիւնակում Սեւագիրը, միւսում՝ Մաքրագիրը: Այսպէս էլ, բնականաբար, առաջին սիւնակում պէտք է դնէինք Սեւագիրը, որի գրութիւնը նախորդել է միւսին. սակայն, այդպէս լինելով հանդերձ, Սեւագրի թերթերի ներմուծումները, որով նաեւ՝ գրառումները խառն են: Ուստի, թէկուզ Մաքրագիրը թուականներ ունի միայն նախաբանային՝ պարմական անդրադարձի հարումում²⁷, բայց մտածեցինք, որ նրա օրինակողը պէտք է գրած լինի ըստ նուէրների ստացման ժամանակագրական կարգի: Ըստ այսմ էլ երկու փարբերակների նուիրարտական յիշարակումները համարակալեցինք²⁸ իրենց հիմք օրինակների ընթացքի կարգով. Սեւագիրն ունեցաւ Ա-ԾԺԳ. համարներ, Մաքրագիրը՝ 1-123. այս համարների անընդմէջ կարգով էլ վերջինը դրեցինք երկրորդ սիւնակում, իսկ առաջինի վկայութիւնները դասադրեցինք ըստ երկրորդի ընթացքի. եւ սրա 1-100 համարների դիմաց ստացանք Ա-ԻԹ., Ն-ՆԷ, ՆԹ-ՁԷ, ՆԸ., ՁԸ-ԾԺԳ., Լ-ԿԹ. հերթագայութիւնը: Այսպէս պարզուցին նաեւ անհամապատասխանութիւնները. նախ՝ Մաքրագրի 101-123 համարների դիմաց Սեւագրում վկայութիւններ չկան. կարծում ենք՝ ինչ որ պահի, երբ ներկայիս Չմմաթի Խորհրդարարի մէջ արդէն փրկել չի եղել, գրառումներն արել են մի այլ փրկող, որից առնուել են Մաքրագրի վերջին 23 յիշարակութիւնները: Ապա՝ նոյն Մաքրագիրը չունի Սեւագրի ԻԷ., ԻԹ., Ն-ՆԱ, ՆԹ., ՁԲ., ՁԹ., ԾԸ-ԾԺԳ. համարները (14 միառոյ):

Այս ընծայամարեանը մեր ժողոված նոյնաբնոյթ այլ բնագրերից նկարագրով փարբեր չէ. ամէն փրկող նոյն «Աստուած ողորմի» սկսումքն է, միայն թէ յաջորդող որևէ անհարի անուան փոխարէն այսպէս բաւական յաճախաղէպ է հաւաքական՝ «հայոց վաճառականացն» արտայայտութիւնը (ՏՊ 1, 3-14, 19-20, 33, 37, 40, 62, 110, 119-120), մի փրկող էլ ունենք՝ «Ջողայեցի վաճառականացն» (18). բնագրի սկզբի այսպիսի յիշա-

27 Այսպէս կայ միայն երկու թուական՝ «Յոյցք հնագոյն դաշանց»ի 1579 եւ եկեղեցին «խաբիբա»ներից ազատելու 1652:

28 Ներքին շարադրանքային անդրադարձների դիւրութեան եւ ցանկերում գործածելու նպատակով մեր բոլոր Ընծայամարեանների յիշարակութիւններն այսպէս համարակալել ենք կարգային թուերով: Այսպէս էս ըստ հարկի շարադրանքի մէջ փակագծուած յիշարակելու ենք բնագրում նշանակուած համարները:

տակումները երեւի արձանագրումներ են 1652 թ. եկեղեցին վերաբացելուց յետոյ այնպեղ զգրած սպասք-հանդերձների, որոնց ծագում-նուիրարտուն յայտնի չի եղել, մնացեալ յիշարակութիւնների մէջ առանձնապէս մեծածախ բան չկայ. այդուհանդերձ, նուիրարտումները մէկից անկի առնուրականներ են եղել²⁹:

Նրկու տարբերակների շարադրանքային տարբերութիւնները. նախաբանային մասում երկունս էլ նոյնական են, բուն նուիրարտական յիշարակումների մէջ Սեւագիրն ունի հաղորդման իմաստը լրացնող-ամբողջացնող բառեր եւ դարձուածներ (տե՛ս Բ/2, Զ/6), օրինակ Զ/6՝ սեւագիրն ունի «մին Տօնացոց պասմայ»³⁰ եւ յիշարակման յորդոր, մաքրագիրը «պասմայ»՝ տպագիր բառը եւ յորդորը չունի, ԺԴ/14ի Սեւագրում ստացուած է «պղընձէ ցահ», մաքրագրում «պղընձէ» բառը չկայ, ԺԸ/18ի Սեւագիրն ունի «Ֆռանկի պարարագի զգեստ՝ իւր սարովն», Մաքրագիրը «իւր սարովն» բառերը չունի: ԻԳ/23ի Սեւագրում «սեղանի մոմբան» է, Մաքրագրում՝ միայն «մոմբան», ԻԴ/24ի Սեւագրում «պղընձէ մոմբան» է, Մաքրագրում՝ կրկին միայն «մոմբան» եւ այլն: Բառական ուշագրաւ է Զ/34ի մէջ Սեւագրի անկի ունեցածը՝ Մաքրագրի «գրակալ»ի փոխարէն այսպեղ կայ՝ «գրգայկալ, որ Խորեղայրերուն հանայպազ վերէն կու հենդրցվի (=ընթերցուի)»: Մաքրագրի 48րդ միատորն ունի՝ «մի մեծ Լուսաւորչի պարկեր, որ սեղանումն կայ», իսկ Սեւագրի՝ սրան համապատասխանող ՂԵ. միատորն ունի «Ա. մեծ Լուսավորչի պարկեր, որ սեղանումն դրած այ, որ Լուսավորչին ամենայն չարչարանք միջումն քաշած այ. թվին ՌՃԻ. (1671) էր տվել ուրն ու խօր, մօր եւ թվեր, աղբօր յիշարակ. Աստուած ողորմի ուրն, ուր ծնօղացն». անհնար չէ, որ վերջինիս նկարագրական մանրամասներով այժմ հնարատր լինի այս նկարը ճանաչել³¹: Եւ այսպէս շարունակ, այսինքն՝ Սեւագրում կան մանրամասներ, որոնք միասում գեղջուկ են, սակայն մեզ համար այդ լրացուցիչ տեղեկութիւններն արժէքատր են³²: Իսկ ԺԹ/19 յիշարակութիւնից յետոյ Սեւագիրն անկի ունի մի վկայութիւն, որով հասկանում ենք, որ եկեղեցին 1652ի վերաբացելու պահին արձանագրուած սպասքի թուարկումն այդպեղ աւարտում է, ուրեմն՝ շարունակութիւնը վերաբերում է դրանից յետոյ ստացուածներին:

Նակատակ Մաքրագրի՝ Սեւագիրը նաեւ ժամանակագրութիւն ունի՝ 11 յիշարակութեան մէջ կան 1666-1683 թուականները. 1666 (ԽԹ/80ից առաջ), 1671՝ երկիցս (ՆԷ/33, ՂԵ/48), 1672 (ԶԴ/37), 1673՝ չորիցս (ՆԲ.28, ՆԹ., ՂԲ/45, ՂԷ/50, ԶԸ/42), 1674 (ՂԶ/49), 1681 (ԸԸ.), 1683 (ԸԹ.): Սրա հիման վրայ վստահ ենք, որ մեր բնագրի ամբողջութիւնը վերաբերում է ԺԷ. դարի երկրորդ կէսին:

1652ին Վենետիկ գնացած Մահակ Եղովկացի (Թօխաթեցի, Ղասաբօղլի) քահա-

29 Մաքրագրի 37րդ միատորնի սովորական «հայոց վաճառականքն»ի փոխարէն սեւագրի ԶԴ. միատորն ունի «հասարակ ժողովրդականք», այսինքն՝ նուիրարտուն առհասարակ ժողովուրդն է, որ կազմուած էր գերագանցապէս առնարականներից:

30 Գրքերի տպագիր լինելը սովորաբար բնորոշուած է թուրքերէն «պասմայ» (Ճ/53՝ «բասմայ»), եւ մի տեղ՝ իւրայեղէն «բարամիայ» (ՂԷ/50) բառերով:

31 Եւ, թուում է, նպարակադիր փնտրումի դէպքում մեր բնագրում թուարկուած իրերի զգալի մասի ներկայ տեղը պարզելն անհնար չէ:

32 Բնագրի երկրորդ սիւնակի յաճախողէպ բացերն այն տեղերում են, որ Մաքրագիրն իր հիմքի համեմատ համառօտ է. հմմտ., օրինակ՝ ՃԱ-ՃԷ. եւ 54-60:

նայի անունից բացի, մեր բնագիրը փալիս է Ս. Խաչի այս ժամանակի եւս երեք քահանայի անուն. 1. փեր Պեպրոս. «մէկ լաւ Խորհրդայտեր» նուէրը փրութի է Ս. Խաչի քահանայ «փեր Պեպրոսին յիշարակ» (փրն Ն.), «ՌՃԺԵ.» (1666) թ. այս նոյն «փեր Պեպրոսի ժամանակ»ն է (փրն ԽԸ/79ից յետոյ), 2. փեր Դաւիթ՝ «ԹՎին ՌՃԼ.ումն (1681), փեր Դաւթին ժամանակ»ն էր (փրն ՃԸ.), 3. Ջուղայեցի փեր Սարգիսն ինքն է Ս. Խաչին նուիրել մի Մաշտոց (փրն Ն^ժ 101)³³:

Վերն արդէն ասել ենք, որ մեզ համար յարկապէս կարեւոր է Ընծայամարեանների մէջ եկեղեցական եւ վանական գրադարանների պարունակած գրքերի պատրկեր փրեսնելու հնարաւորութիւնը: Նոյնը վերաբերում է նաեւ Ս. Խաչի եկեղեցական գրադարանին, որի ուրուագիծն այսպէղ յարակ երեւում է. 1652ի վերաբացումից յետոյ առկայ գրակաւնութիւնը երեւի 6-7րդ յիշարակումների մէջ եղած 8 միաւորն է. «մին ճաշու գիրք, մին Շարակնոց, Ա. պատմայ Սաղմոս, Ա. ձեռագագիր Սաղմոս, Ա. Մաշտոց, Ա. Տօնացոյց», «Բ. Աւերարան»: Նաւագայ նուիրաւորութիւնների հետ միասին այս բնագրում ունենք 24 գրքի յիշարակում՝ 15 ձեռագիր, 9 փապգիր, որոնց այբբենական ցանկերն են՝

ՁԵՆԱԳԻՐ ԳՐԶԵՐ

Աւերարան - Է/7.
 Աւերարան - Է/7.
 Աւերարան, ոսկաւրուփ, մաքաղաթ, կոստղն արծաթով - ԻԲ/21 (փրն ստորեւ՝ ծնթ.).
 Ժողովածու գիրք՝ Տաղ, Դպրութիւն եւ Սպասաւորութիւն - ԽԸ/79.
 Խազարեր, Բ. այլ ուրիշ փեր - ԺԹ/19.
 Խորհրդայտեր - Ն.
 Խորհուրդայտեր - ԻԸ/27 (մեր Սեւագիրք).
 Խորհրդայտեր - ՆԳ/29.
 Ճաշու գիրք - Զ/6.
 Մաշտոց - Զ/6.
 Մաշտոց - 101.
 Մաշտոց - ՃԸ.
 Շարակնոց - Զ/6.
 Շարակնոց, մաքաղաթէ - ՂԲ/45.
 Սաղմոսարան ձեռագագիր - Զ/6.
 Տօնացոյց-Սաղմոսարան-Շարակնոց - ՃԷ/60.

ՏՊԱԳԻՐ ԳՐԶԵՐ

Աւերարան - 113.
 Աւերարան, Բ. երեսն կոստղած արծաթով - 112.
 Բնարան - 121 (փրն ստորեւ՝ ծնթ.).
 Ժամագիրք Արեւնի - ԼԶ/67.
 Ժամագիրք Արեւնի - 117.
 Շարակնոց - Ճ/53.
 Սաղմոսարան - ՂԷ/50.
 Սաղմոսարան - Զ/6.
 Տօնացոյց - Զ/6:

³³ Նկատի չունենք այն փրեղիները, ուր որեւէ քահանայի անուն յիշում է որպէս նուիրաւորի հայրանուն, այդպիսին է, օրինակ՝ «Ջուղայեցի փեր Ստեփանոսի որդի Եաղուպ աղա»ն (ՆԱ.):

Ինչպես րենում ենք, նաև՝ ինչպես սպասելի էր, գրադարանը գերազանցապես ծիսական է: Այսուհանդերձ, այս գրադարանի լրիս պատկերը պարզուրու է Սուրբ Խաչին վերաբերող փաստաթղթերի ամբողջության քննությանը, որ պետք է արուի ԺԶ-ԺԸ. դդ. ընթացքում Իսրայիայում և մերձակա երոսպական քաղաքներում գրում և գրում և հայերեն բոլոր ձեռագրերի րուեալների հենքի վրայ. իսկ սա, կարծում ենք, ամսագրային մեր հրապարակման խնդրի շրջանակից դուրս եկող՝ այլ և ապագայում յարակուելիք հարց է:

Ընծայամարեանների մեջ յիշարակում ևուիրարու անձանց անուանացանկերի խնդիրը, բնականաբար, շար կարևոր է, իսկ Վենեպիկի հայոց եկեղեցու մարեանի դեպքում՝ շար աելի կարևոր է, որովհետև այսպեղ յիշարակում են ԺԷ. դ. երկրորդ կեսի վենեպահայ առաել ունետր անհարները: Ենթադրելի էր, թե այսպեղ պետք է լինելին այդ շրջանում Վենեպիկ երթողարձած բոլոր հայ աուերականների և նրանց հետ կապում րարարեսակ գործակարարների անունները, բայց այդպես չէ. այսպեղ չկայ, օրինակ՝ Պոդոսի և Լաբիկի որդի, րեր Սիմեոնի աշակերտ Մելքոն Ջուդայեցին³⁴, որ 1657 թ., Վենեպիկում գրել է մի Ժամագիրք-Մաղմոսարան³⁵. չկայ նաև շուրջ 1690-1705 թթ. Վենեպիկում աուերական եռանդուն գործունելութիւն ունեցած և 63 միաուր նամակով մեզ յայրին Ջուդայեցի Մարտիրոսի որդի Նայրապետը. և այլն:

Ինչեւէ, բնագրիս անձնանունների կամ ևուիրարուների (նրանց քանակն այսպեղ 85 է)³⁶, նաև՝ ևուեր սրացում գոյք-սպասք-հանդերձանքի ցանկերի խնդիրը ևս թողնում ենք գրքային հրարարակութեանը, սակայն ներկայացնում ենք ևուիրարուների ծագում-ծնողաւայրերի պարկերը. կան որոշ յիշարակումներ, որոնց մեջ ևուիրարուի ծնողաւայրի անուն չկայ, սակայն դրանք ընդհանուր քանակի փոքր մասն են. Ագուլեցի - 2 մարդ (57 և 98, 107). Անկիւրացի - 1 մարդ (16). Ասրապարցի - 1 մարդ (81). Բելլորաթեցի - 2 (64 և 70). Երեւանցի - 1 (ՆԹ., 89). Թ-ոխաթեցի - 1 (67). Լեհացի - 1 (51). Ղափանցի - 1 (ՃԺԲ.). Շոթթեցի - 1 (117). Ջուդայեցի (Ջուդեցի, Ջուդիցի, Ջուդեցի, Ջուդիցի) - 41 մարդ³⁷. Վանեցի - 4 (49, 54, 71, 106). Փառակեցի - 1 (75):

Այսինքն՝ քանակով գերակշռող ջուդայեցիների կողքը Վենեպիկում ներկայ են նաև արևմտահայեր և այլ գաղթաւայրերից եկածներ. ըստ այսմ էլ՝ թե՛ Սուագրի և թե՛ Մաքրագրի մեջ մեղմեղմեղ գգացում են գրառողների երբեմն արևմտահայ, երբեմն էլ՝ արևելահայ արարասանութեան դրսետորումներ. Ղ. Արաբեց, Ճ. րասմայ, 43 «Արապեց», 53 պասմայ, և այլն:

Ուշագրաւ են նաև ևուիրարուների մականուն-րոհմանունները.

34 Մեր բնագրի ԽԲ.73 միաուրում յիշող՝ Նագարի որդի Մալքոն Ջուդայեցին րարեր մարդ է:

35 Ջմմաթի ցուցակ Բ., էջ 41, ձեռ. Ն⁶⁶ 445 (ԻԹ.). երկրորդ սրացող Բաբան իր եղբայր Ամիրասաթի յիշարակին այս ձեռագիրը 1660 թ. ևուրել է Լիվոնոյի Ս. Կոզմա եկեղեցուն, ուր նաև Ամիրասաթի գերեզմանն էր:

36 Մրածելի է՝ ապագայ գրքային հրար. մեջ բոլոր անունները միարեւ, խառը ներկայացնել, թե՛ ըստ Ընծայամարեանների, որի դեպքում վենեպահայ աուերականների անունները միաներին (ասենք՝ Անկիւրիայի Ս. Ասրաւածաթին կամ Կարմիր վանքի) ևուիրարուներին չեն խառնուի, և այս դեպքում կարելի է յարակ դարողութիւններ անել ԺԷ. դ. վենեպահայ աուերականների խնդիրների վերաբերաւ:

37 Սրանց յիշարակումների համարները թուարկելն անիմաստ համարեցինք:

Ալթունենց (95).	Խօջաջանենց (Ջուղայեցի. 39, 42, 102).
Արապենց (43).	Նարունենց (Ջուղայեցի. 38).
Բնօխ (մականուն Ջուղայեցի Ալեքսանի և Մելիքանի. 22, 42, 99, 118).	Ղարադանենց (55, 92, 104).
Բուլոթենց, Բուլոթ, Պուլոթենց (Ջու- ղայեցի. 42, 35, 46, 60, 86, 97, 200.).	Մալխասենց (34).
Գեղաքենց (Ջուղայեցի. 58).	Մելիքադինց (116).
Գիլանենց (Ջուղայեցի. 121, 100.).	Միրմանենց (Ջուղայեցի. 42, 80).
Դավաչինց (ԻԷ.)	Նանենց (68, 69, 82)
Երջանենց (Ջուղայեցի. 42, 59, 103, 102, 105, 109):	Շահրիստանենց (Ջուղայեցի. 200., 47).
Զինարենց (72).	Շամբենց (108).
Զօմփենց (Ջուղայեցի. 56).	Շենշենենց (Ջուղայեցի. 23, 77).
Լօկենց (115).	Ոսկակեռենց (Ջուղայեցի. 74).
Խանենց (Ջուղայեցի. 25).	Ջամալենց (Ջուղայեցի. 21, 26, 100.).
	Ջանրաբինց (ՆԲ/28)
	Ջիլալխանենց (Ջուղայեցի. 42),
	Սլեմանենց (123).
	Քրիստոբենց (68):

Մեր ազգանունների մեծամասնության նման՝ սրանց զգալի մասն առաջացել է փոխմի անուանադիր նախնի անհապի անձնանունից, բայց կան նաև այդ կանոնից դուրս եկող անուններ. օրինակ՝ «Նարունենց» - պետք է առաջացած լինի «Ահարոն»ի բարբառային ձևից, «Շամբենց»՝ պետք է պարկանած լինի Շամբ-Դարաշամբից՝ Նոր Ջուղա գնացած ընտանիքի, իսկ «Ոսկակեռենց» (74)՝ Ոսկիարամենց փոխանունը թույլ է առանձնակի արժէք ունի պարամնաբուժության պարամության համար:

Անկասկած է, որ այս բնագրերի գրքային հրապարակությունը պետք է օժտուի փոխառնալ, բարբառային և սակաւ գործածական բառերի ցանկով կամ ցանկերով. սակայն կրկին ամսագրային տպագրությունը չձանրաբեռնելու նպատակով այսպեղ այդ խնդրին չենք անդրադառնում, քանի որ ներկայ բնագրում անհասկանալի բառեր գրեթէ չկան:

Բնագիրը մշակել ենք ընդունում եղանակներով և պայմանական նշաններով, միակ բացառությունը երևի այն է, որ ինքնին յստակ համարելով՝ Ա-Ժ. թուարառների կողքը 1-10 թուանշաններ չենք դրել:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

[ԸՆԾԱՅԱՄԱՏԵԱՆ ԵՐԵՒԱՆ ՍՈՒՐԲ ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ]

Ա. ՍԵՒԱԳԻՐ

Բ. ՄԱՔՐԱԳԻՐ

[384] Այս է ծանուցումն Սահմանադրության ազգիս Հայոց. յամի Տեառն մերոյ 1579, ի քաղաքն ի Վենետիկ

Աստուած լուսաւորէ փառք արքայութեան զհոգի ամենափառաւոր եւ ամենագին Մարկոսի Ծիանեայ, որ յամի Փրկչին 1253 առատաձեռնութեամբ տուաւ մեր Հայոց ազգիս վաճառականաց իր մէկ տունը, որ գետեղուած է ի Ս. Յուլյանոս թաղի, որպէս զի մշտնջենաւորապէս մնայ Հայոց ազգին, ինչպէս որ պայմաններն ալ գրուած են իր կտակին մէջ: Անցեալ ատեններ հօն բնակէին մեր վաճառականք, եւ երբ շատցան ազգայինքն, իրենց յօժար կամօք թողուցին այն տունը իրենց (Հայրենակից) աղքատաց, եւ իրենք գնացին առանձին տուններու մէջ բնակելու: Այս տան (մէկ մասին) մէջ խորան մի շինեցին, միւս մասին մէջ աղքատներն կու բնակէին: Սահմանեցին եւս՝ որ էջմիածնի կաթողիկոսական աթոռէն քահանայ մի գայ եւ աստուածային պաշտամունքը կատարէ: Դարձեալ. ազգային վաճառականք իրենց մէջ պայման մ'ալ հաստատեցին, որ իրենց ողորմութեան տուրքով թէ՛ այդ խորանն պահպանուի եւ թէ՛ աղքատներուն. եւ ինչուան այս օրս կու պահուի այս սահմանադրութիւնս, [385] որով ամէն տարի վաճառականներէն մէկն կ'ընտրուի Պահպանիչ (Conservatore), որ ժողովէ վաճառականներէն իրենց կամաւոր տուրքը, որպէս զի վայելչապէս պահուին խորանն եւ աղքատք: Ով որ այս վերոյիշեալ Սահմանադրութիւնս պահէ միշտ հաստատուն, եւ բարի մտօք կատարէ միշտ բարեկարգութիւնը, օրհնեալ ըլլայ յամենակալէն Աստուծոյ, օրհնեալ ըլլայ յամենայն սրբոց, եւ արժանի սուրբ արքայութեան եւ Աստուծոյ յաւիտեանական փառաց. ամէն՝:

[18բ] Փառք համագոյ, անբաժանելի սուրբ Երրորդութեան, եռակի տէրութեան եւ միասնական աստուածութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ անգրաւ յաւիտեանս. ամէն: Արդ, ի թուահաշուութեանս հայազուն սեռի հազարերորդի, հարիւրերորդի եւ թիւ մի յարաբարթի (1101+551=1652)՝ երջանիկ եւ երիցս երանեալ հայրն հանուրց, որ եղեւ կրկին լուսաւորիչ ազգիս Հայոց, աստուածաբան հայրապետ տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսն, երեալ Սուրբ աթոռոյն էջմիածնայ, մեծաւ փափականօք դէմ եղեալ գնաց ուխտ եւ երկրպագութիւն լուսաբոխ սուրբ գերեզմանի փրկչին մերոյ Յիսուսի, զոր եւ կատարեալ գուխտ իւր, մեծաւ հանդիսիւ եւ կարի ամբոխիւ, հանդերձ աշակերտօք, յողով վար-

ՅՈՅՑՔ ՀՆԱԳՈՅՆ ԴԱՇԱՆՑ Ի ԹՈՒԻ ՓՐԿՁԻՆ 1579. Ի ՔԱՂԱՔՆ ՎԷՆԵՏԻԿ

Աստուած զհոգին մեծահօր եւ մեծափառ իշխանին Մարկոս Ծիանէին լուսաւորեալ ընդ արդարսն ի յերկինս դասեսցէ, որ ի թուի փրկչին մերոյ 1253 պարգեւեաց մերոյս հայկազուն ցեղին վաճառականաց գտունն մշտնջենաւոր, որ է ի թեմին Սրբոյն Յուլյանոս մարտիրոսին (որպէս ի կտակին իւրում միւրսմիտէ յայտնի է տեսողացն): Որ յամս առաջինս վաճառականքն ի Հայոց ազգէն բնակէին անդ. եւ յորժամ բազմացան սոքա՝ ըստ իւրեանց կամաց զաղքատս ի յիւրեանց ազգէն եղին ի տունն յայն, եւ ինքեանք գնացեալ անտի ի տունն մասնաւորս բնակ եղին, եւ շինեցին [1բ]՝ զմատուռ իմն ի յայնմիկ տեղով. եւ գայր ի լուսահեղ դահէն էջմիածնի քահանայ նոցա՝ առ ի մատակարարել զխորհուրդն աստուածային: Եւ եղին ի մէջ իւրեանց պայման, զի ողորմութեամբն իւրեանց զմատուռն զայն եւ զքահանայն եւ զաղքատսն պահեսցն, որպէս մինչեւ ցայսօր լինի եւ կատարի նոյն դաշն: Եւ դաշն նոցա է այս, զի յամենայն տարւոյ մինն ի յայնց վաճառականաց լինիցի երեցփոխան, որ հաւաքեսցէ ի վաճառականացն զողորմութիւն՝ առ ի շէն պահել զմատուռն, եւ զաղքատսն ուրախացուցանել: Եւ զայս վերոյ յիշեալ դաշն որ պահեսցէ եւ ի կատար հասուցէ միշտ եւ հանապաղ. ըստ բարի դիտաւորութեանն վերորդերոց, ինքն ի յաստուածպետական բարութենէն եւ յամենայն սրբոց օրհնեալ լիցի, եւ ի յերանական կեանսն աստուածային տեսութեան արժան լիցի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն՝:

[2ա] Փառք համագոյ, անբաժանելի սուրբ Երրորդութեան, եռակի տէրութեան եւ միասնական աստուածութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ անգրաւ յաւիտեանս. ամէն: Արդ, ի թուահաշուութեանս հայազուն սեռի հազարերորդի, հարիւրերորդի եւ թիւ մի յարաբարթի (1101+551=1652)՝ երջանիկ եւ երիցս երանեալ հայրն հանուրց, որ եղեւ կրկին լուսաւորիչ ազգիս Հայոց, աստուածաբան հայրապետ տէր Փիլիպպոս սրբազան կաթողիկոսն, երեալ Սուրբ աթոռոյն էջմիածնայ, մեծաւ փափականօք դէմ եղեալ գնաց ուխտ եւ երկրպագութիւն լուսաբոխ սուրբ գերեզմանին փրկչին մերոյ Յիսուսի,

դասպետը եւ բազում եպիսկոպոսը, եւ դարձեալ անդրէն, սրբազան Հայրապետն եկն յարքայանիստ եւ մեծահրջակ մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս: Եւ ժամանակին յայնմ էին խարեփայք ի տունս յարեւմտան, որք երեւելօք ձեւացեալ էին կարգաւոր, բայց ի ներքոյ էին գայլք յափշտակողք, որք տիրեալ էին այս սուրբ անուն եկեղեցոյս Երեւման խաչ, որ է վիճակ ազգ[19ա]իս մերոյ Հայոց, անուղղազանցելք շրջէին եւ խայտառակ վարուք ուտէին եւ ըմբէին, զոր ոչ էր կարգ քրիստոնէից, զսեղան սուրբ եկեղեցոյս կողոպտէին, զգեստն եւ զանօթն վաճառէին, որոց համբաւ չարութեան եւ աղաղակ հերժուածութեան հնչեաց ի լսելիս երջանիկ Հայրապետ[ի] ն մեր տեառն Փիլիպպոս կաթողիկոսի: Եւ սուրբ Հայրապետն իսկոյն եւ վաղվաղակի չարաչար բանադրեաց զհերժուածքն այն, եւ նոքա աստ եւ անդ անկանելով, եւս քան զեւս չարացան, եւ կարի որումն եւ չարիք սերմանեցին ընդ ազգիս մերոյ, մինչեւ զեկեղեցիս մեր եւս ետուն փակել: Իսկ ի խնդրոյ մերային ազգաց վաճառականաց սրբազան Հայրապետն մեր առաքեաց զտէր Սահակն իւրով բարձր հրամանաւ եւ թղթով վասն քահանապետութիւն առնելոյ. եւ նա եկեալ ի Վինէտիկ, եկիտ զեկեղեցին փակեալ, վասն որոյ ջանս եղեալ ընդ վաճառականաց, բազում նեղութիւն եւ վիշտոյ կրեցին՝ մինչեւ բացին զեկեղեցին, եւ վերստին նորոգեցին զսա եւ պայծառացուցին զեղծեալն կարգ, եւ հաստատեցին զժամակարգութիւն, զպաշտօն եւ զպատարագն:

զոր եւ կատարեալ զուխտ իւր, մեծաւ հանդիսիւ եւ կարի ամբոխիւ, հանդերձ աշակերտօք, յոլով վարդապետօք եւ բազում եպիսկոպոսք եկն յարքայանիստ եւ մեծահրջակ մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս: Եւ ժամանակին յայնմ էին խարեփայք ի տունս յարեւմտան, որք երեւելօք ձեւացեալ էին կարգաւոր, բայց ի ներքոյ էին գայլք յափշտակողք, որք տիրեալ էին այս սուրբ անուն եկեղեցոյս Երեւման խաչ, որ է վիճակ ազգիս մերոյ Հայոց, անուղղազանցելք շրջէին եւ խայտառակ վարուք ուտէին եւ ըմբէին, զոր ոչ էր կարգ քրիստոնէից, զսեղան սուրբ եկեղեցոյս կողոպտէին, զգեստն եւ զանօթն վաճառէին, որոց համբաւ չարութեան [2բ] եւ աղաղակ հերժուածութեան հնչեաց ի լսելիս երջանիկ Հայրապետն մեր տեառն Փիլիպպոս կաթողիկոսի: Եւ սուրբ Հայրապետն իսկոյն եւ վաղվաղակի չարաչար բանադրեաց զհերժուածքն այն, եւ նոքա աստ եւ անդ անկանելով, եւս քան զեւս չարացան, եւ կարի որումն եւ չարիք սերմանեցին ընդ ազգիս մերոյ, մինչեւ զեկեղեցիս մեր եւս ետուն փակել: Իսկ ի խնդրոյ մերոյ ազգաց վաճառականաց սրբազան Հայրապետն մեր առաքեաց զտէր Սահակն իւրով բարձր հրամանաւ եւ թղթով վասն քահանապետութիւն առնելոյ. եւ նա եկեալ ի Վինէտիկ, եկիտ զեկեղեցին փակեալ, վասն որոյ ջանս եղեալ ընդ վաճառականաց, բազում նեղութիւն եւ վիշտ կրեցին՝ մինչեւ բացին զեկեղեցին, եւ վերստին նորոգեցին զսա եւ պայծառացուցին զեղծեալն կարգ, եւ հաստատեցին զժամակարգութիւն, զպաշտօն եւ զպատարագն:

Եւ որք մնացեալ էր յառաջնոցն յիշատակաց՝ թէ՛ անօթ եւ թէ՛ [19բ] զգեստ, այս է.

Ա. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն մին արծաթէ սկի՝ իւր մաղրզմանովն. ԼԶ. (36) ունցայ է³:

Բ. Աստուած ողորմի դալալ Պայէ, որ ետուր մին արծաթէ բլօր խաչ, Դ. քարէ սուն, եկեղեցուն զաւշամէն էլ շինեց. ամէնք ասացէք Աստուած ողորմի իւր հոյգոյն:

Գ. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն Գ. արծաթէ կանթեղ. մին մեծ, Բ. փոքր:

Դ. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն մին արծաթէ բուրվառ:

Ե. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն սպիտակ սարասար շուրջառ մի՝ իւր սգեստովն⁴:

Եւ որք մնացեալ էր յառաջնոցն յիշատակաց՝ թէ՛ անօթ եւ թէ՛ զգեստ, այս է.

1. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն մին արծաթէ սկի՝ իւր մաղրզմանովն. ԼԶ. (36) ունցայ է:

2. Աստուած ողորմի դալալ Պայէ, որ ետուր Ա. արծաթէ բլօր խաչ, Դ. քարէ սուն, եկեղեցուն զօշամէն:

3. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն Գ. արծաթէ կանթեղ. մէկն մեծ, Բ. փոքր:

4. [3ա] Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն մին արծաթէ բուրվառ:

5. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն մին սպիտակ սարէսար շուրջառ իւր զգեստովն:

2. Աստուած ողորմի Հայոց վաճառականաց, որ ետուն մին ձաշու գիրք, մին Շարակնոց, մին պասմայ Սաղմոսարան, մին ձեռացագիր Սաղմոսարան, մին Մաշտոց, մին Տօնացոց պասմայ՝ յիշատակ. ամէնքդ ասացէ՛ք Աստուած ողորմի իւրենց հոգոն:
